երգել... Դիցուք թէ անգիր արեցիր, բայց ձայնը որտեղի՞ց կբերես... Իմ մէջ առաջոայ յիշողութիւնը չէ մնացել. ես դեռ աշակերտ եղած ժամանակ Հոմերոսից եւ Վիրգիլիոսից ամբողջ գլուխներ անգիր գիտէի, բայց հիմա դժուարանում եմ մի քանի աղօթքներ անգիր սերտել...

Հազը դարձեալ սկսեց: Ասլանը ուշադրութեամբ լսում էր: Իմ ուշադրութիւնը նոյնպէս գրաւեց նրա բողոքը, որի մէջ այնքան մաղձ եւ դառնութիւն կար, որքան մեծ յօժարութիւն՝ նոիրոած լինելու եկեղեցու սպասաւորութեանը: Նա շարունակեց.

— Դատապարտելին այն չէ, որ ձեռնադրող եպիսկոպոսը մեզանից պահանջում է այն, ինչ որ կը պահանջէր մի անգրագէտ տիրացուից, դատապարտելին այն է, որ ժողովուրդն էլ հէնց այդ է պահանջում: Նրա համար պէտք է գիտենալ ամբողջ այսմաւուրքը, ամբողջ հարանց վարքը... Նրա համար պէտք է գիտենալ, թէ ինչպէս տէր Հուսկան որդին տեսաւ իր առջեւ արեան ծովը, թէ որտեղ Յովնան մարգարէն դուրս եկաւ ձկան փորից, կամ ինչպէս զռաց Բաղաամի էշը... Այդ բոլորը պէտք է գիտենալ, բայց մենք այդ բաները չենք սովորել...

Նրա սեղանի վրայ դրոած էր մի բաժակ կաթ, նա վեր առեց եւ կոկորդը զովացրեց: Ասլանը դիմեց նրան բժշկի հարցով.

— Այժմ ինչպէ՞ս էք զգում ձեզ:

— Այժմ այնքան վատ չեմ... այստեղ օդը բաւական կազդուրեց ինձ... — ասաց նա՝ կաթի բաժակը ցած դնելով: — Բայց ձեզ, իբրեւ բժշկի, պէտք է աւելի հասկանալի լինի, որ ես կարօտ եմ սնունդի, եւ լաւ սնունդի, որից զրկոած եմ այստեղ... Պէտք է պաս պահել, պէտք է ենթարկոել վանական բոլոր կանոններին, իսկ դրանք սաստկացնում են իմ հիւանդութիւնը...

— Չէ՞ք մտածում թողնել վանքը: Ես ձեզ խորհուրդ կը տայի թողնել:

— Ոչ, մի անգամ որ սկսել եմ, պէտք է վերջացնեմ...

— Թոյլ տուէք քննել ձեր կուրծքը:

— Ի՞նչ քննել, ես գիտեմ այնտեղ ի՜նչ է կատարւում...

Հազը, որ աւելի սաստկութեամբ սկսոեց այժմ, ստուգեց, թէ ի՜նչ էր կատարւում այնտեղ...

Ասլանը աշխատում էր չխօսեցնել նրան, որովհետեւ նկատում էր, թէ որքան տանջւում էր նա խօսելու ժամանակ: Բայց նա ցանկանում էր խօսել եւ միշտ խօսել, կարծես երկար ժամանակ չէր խօսացել: